Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

-3-3-3- - - - - - - - - -

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ԱՄԻՍ

30.08.97թ.

Համաձայն 22 գերագույն խորհրդի 28.06.1993թ. ,,Հայաստանի Հանրապետության պետական և հանրային գնահատողի սեփականաշնորհման մասին օրենքի և 29.08.97թ. կայացած քաղաքապետարանի պետական և հանրային գնահատողի սեփականաշնորհման հանձնաժողովի նիստի արձանագրության

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հանրային գնահատողի սեփականաշնորհվել

226

Գինգիսանի 2-առն, գինդ սեն յախանց, 170,0գմ.բնակհանուր մակերեսով, որից 110,0գմ.բնակելի, 35դրամ հաշվեկշռային արժեքով, 3-րդ ասոցիացիայի վերապահումը, առանձին մնում է տան, բաց.վարդան Վարդանյանի Վարազատյանի անվամբ, որպես բնակհանուր հասանելի սեփականություն բնակելի ներդրումից յուրաքանչյուր անդամների հետ՝

1. Վարազատյան Վարդան Վարդանյանի
2. -,,- Գոհար Վասիլի
3. -,,- Նուսան Սոսոյանի
4. -,,- Անի Վարդանի
5. -,,- Գիտա Վարդանի
6. -,,- Անետ Վարդանի
7. -,,- Գագիկ Վարդանի
8. -,,- Արմինե Վարդանի
9. -,,- Արսեն Համլետի
10. -,,- Հայկուհի Համլետի
11. -,,- Հայկուհուշ Համլետի

Տանում կառուցված 0,03գմ.մառանը, 22,0գմ.ավտոտնակը և դրա տակ գտնվող 117,30գմ.կիսանկուսալ վիճակ ունեցող կառույցը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎ
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎ
0097621

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«13» «Հոկտեմբեր» 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի ԹԻՎ 630 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1055-Ա

Գյումրու համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Սուսաննա Ստեփանիկի Կարապետյանը, Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 30-ի թիվ 630 որոշման 923-րդ կետի մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություն կատարելու խնդրանքով:

Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 30-ի «Բնակարանային սեփականաշնորհման մասին» թիվ 630 որոշման 923-րդ կետով թույլատրվել է սեփականաշնորհել Կինգիսեպի 2 տուն, հինգ սենյականոց 170,84 քմ. ընդհանուր մակերեսով, որից 110,0 քմ. բնակելի, 85 դրամ հաշվեկշռային արժեքով, 3-րդ աստիճանի վնասվածությամբ, առանձին մեկուսացված տունը քաղաքացի Վարդան Վարանցովի Կարապետյանի անվամբ, որպես ընդանուր համատեղ սեփականություն ընտանիքի 11 անձից բաղկացած անդամների հետ՝

1. Կարապետյան Վարդան Վարանցովի
2. Կարապետյան Գաննա Վասիլի
3. Կարապետյան Սուսաննա Ստեփանիկի
4. Կարապետյան Անի Վարդանի
5. Կարապետյան Լիանա Վարդանի
6. Կարապետյան Աննա Վարդանի
7. Կարապետյան Գայանե Վարդանի
8. Կարապետյան Արմինե Վարդանի
9. Կարապետյան Արսեն Սամվելի

10. Կարապետյան Մարիամ Սամվելի
11. Կարապետյան Հայկանուշ Սամվելի:

Դիմումին կից ներկայացվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի կողմից տրված 14.03.2022 թվականի թիվ 8/62-352 գրությունը, որի համաձայն՝ քաղաքացիներ Գաննա Վասիլի Կարապետյանը՝ ծնված 06.08.1958 թվականին, Արսեն Սամվելի Կարապետյանը՝ ծնված 13.12.1980 թվականին, Մարիամ Սամվելի Կարապետյանը՝ ծնված 05.09.1983 թվականին, Հայկանուշ Սամվելի Կարապետյանը՝ ծնված 10.04.1985 թվականին ՀՀ բնակչության պետական ռեգիստրի հաշվառումներով չեն անցնում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 29.06.1993 թվականին ընդունված և 04.01.2007 թվականին ուժը կորցրած «ՀՀ պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ պետական և հանրային բնակարանային ֆոնդի տների բնակարանների սեփականաշնորհումը՝ կամավորության սկզբունքով քաղաքացիներին բնակարանների /բնակելի տարածությունների/ անհատույց հատկացումն է: Նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված են սեփականշնորհման սուբյեկտները, համաձայն որի՝ այդպիսիք են Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, տվյալ բնակտարածությունում գրանցում ունեցող, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում բնակտարածության նկատմամբ իրավունքը պահպանած քաղաքացիները: Այսինքն՝ օրենքի 3-րդ հոդվածի համապատասխան սեփականաշնորհման սուբյեկտ հանդիսանալու համար բավարար է, որպեսզի անձը մշտապես բնակվի Հայաստանի Հանրապետությունում և տվյալ բնակտարածությունում ունենա գրանցում: Տվյալ դեպքում քաղաքացիներ Գաննա Վասիլի Կարապետյանը, Արսեն Սամվելի Կարապետյանը, Մարիամ Սամվելի Կարապետյանը, Հայկանուշ Սամվելի Կարապետյանը Գյումրի քաղաքի Կինգիսեպի 2 տանը մշտապես չեն բնակվել և բնակչության պետական ռեգիստրի հաշվառում չունեն, հետևաբար նշված հիմքը բավարար է քաղաքացիներ Գաննա Վասիլի Կարապետյանին, Արսեն Սամվելի Կարապետյանին, Մարիամ Սամվելի Կարապետյանին, Հայկանուշ Սամվելի Կարապետյանին Գյումրի քաղաքի Կինգիսեպի 2 տան սեփականաշնորհման սուբյեկտների կազմից հանելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Սուսաննա Ստեփանիկի Կարապետյանի 10.05.2022 թվականի դիմումը (համայնքպետարանում մուտքագրված՝ 2022 թվականի մայիսի 10-ին, թիվ 8165 թվագրությամբ)՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 30-ի «Բնակարանային սեփականաշնորհման մասին» թիվ 630 որոշման 923-րդ կետում կատարել փոփոխություն՝ «Գաննա Վասիլի Կարապետյան, Արսեն Սամվելի Կարապետյան, Մարիամ Սամվելի Կարապետյան, Հայկանուշ Սամվելի Կարապետյան» բառերը հանելու միջոցով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սուսաննա Ստեփանիկի Կարապետյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Կ. ԲԱԴԱԼՅԱՆ

Չեխովի փողոց

Գուսան Նշանի փողոց

Գուսան Նշանի փողոց

Թումանյան փողոց